Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» «Նոյեմբերի» 2019թ.

ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ Ա.Մուրադյան, Օ. Մինասյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

Բացակայում էր՝ Մ. Մխիթարյանը

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ա. Մուրադյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 19.11.19թ., ըստ որի «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն ըստ ՊԵԿ-ի կողմից տրամադրած տեղեկատվության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորությունները 413,451 ՀՀ դրամ: Ոչ ավտոմատ ծանուցումով՝ համաձայն ՀՀ կառավարության 02.05.2019թ. թիվ 516-Ն որոշման 1-ին կետի 12-րդ կետի և հրավերի 7.18 և 7.19 կետերի «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը և վճարել ժամկետանց պարտավորությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 22.11.2019թ.) և վճարումը հավաստող փաստաթղթի սկանավորված տարբերակը ուղարկել գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մուրադյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում առաջին տեղ զբաղեցրած «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի՝ ՊԵԿ-ի կողմից տրամադրած տեղեկատվության հիման վրա հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը՝ 413,451 ՀՀ դրամ վճարումը հավաստող փաստաթղթի սկանավորված տարբերակի ներկայացնելը:

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Մուրադյան

---------- Օ. Մինասյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան